ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2006 թվականի հունիսի 1-ին

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 3

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Հոդված 15. Սահմանադրական դատարանի անդամի և նախագահի թափուր տեղերը համալրելու կարգը

1. Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարելուց հետո թափուր տեղում նոր անդամի նշանակումը կատարվում է երկամսյա ժամկետում՝ սահմանադրական դատարանի անդամի նշանակման համար Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված կարգով:

2. Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում սահմանադրական դատարանի նախագահ նշանակվում է Սահմանադրությամբ սահմանված կարգով:

3. Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում մինչև Սահմանադրական դատարանի նախագահի նշանակվելը նրա լիազորություններն իրականացնում է Սահմանադրական դատարանի տարիքով ավագ անդամը: